

## 4. Ա Ր Տ Ա Ք Ի Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

### 4.1. Վճարային հաշվեկշիռը 2012 թվականի հունվար-մարտին

Վճարային հաշվեկշռի միասնականացված հոդվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության արտաքին գործառնությունները 2012 թվականի հունվար-մարտին հիմնականում կապված են եղել արտաքին առևտրի հետ: Կապիտալի ներհոսքը գլխավորապես կատարվել է պաշտոնական գրանտների, միջպետական վարկի միջոցով և միջազգային կազմակերպություններից ստացված ֆինանսական օգնության հաշվին\*։ Ըստ նախնական տվյալների, 2012 թվականի հունվար-մարտին ԼՂՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 11024.3 մլն դրամ:

Ապրանքների գծով պակասուրդը 2012 թվականի հունվար-մարտին կազմել է 18704.7 մլն դրամ և 2011թ. հունվար-մարտի նկատմամբ աճել է 37.1 տոկոսով:

Ծառայությունների բնագավառում, ստացված տվյալների ամփոփման արդյունքներով, 2012 թվականի հունվար-մարտին հաշվեկշռի պակասուրդը կազմել է 1801.8 մլն դրամ և 2011թ. հունվար-մարտի նկատմամբ աճել է 14.6 տոկոսով:

Ընդհանուր առմամբ, 2012 թվականի հունվար-մարտին ապրանքների և ծառայությունների գծով պակասուրդը կազմել է 20506.5 մլն դրամ (2011թ. հունվար-մարտի 134.8 տոկոսը), եկամուտների գծով հաշվեկշռի պակասուրդը՝ 442.9 մլն դրամ (104.5 տոկոսը), իսկ ընթացիկ տրանսֆերտների (նվիրատվությունների) սալդոն՝ 9925.1 մլն դրամ (142.0 տոկոսը):

Կապիտալի հաշվի հոդվածների սալդոն կազմել է 1059.8 մլն դրամ:

2012 թվականի հունվար-մարտին ԼՂՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հոդվածները ունեցել են հետևյալ պատկերը՝

- ուղղակի ներդրումները տնտեսության մեջ՝ 1107.8 մլն դրամ,
- պորտֆելային ներդրումների պասիվային մասը՝ 118.3 մլն դրամ,
- այլ ներդրումների ակտիվային մասը՝ -22641.8 մլն դրամ,
- այլ ներդրումներից պարտավորությունները՝ 31313.3 մլն դրամ:

Վճարային հաշվեկշռի վերլուծական ներկայացումից պարզ երևում է, որ մեր տնտեսությունը շարունակում է կախվածության մեջ գտնվել արտաքին աշխարհից:

ԼՂՀ վճարային հաշվեկշռների վերլուծական ներկայացումը  
2011-2012թթ. հունվար-մարտին

	2011թ. հունվար-մարտ	2012թ. հունվար-մարտ	Բացարձակ փոփոխությունը
<i>/մլն դրամ/</i>			
<b>Ա.Ընթացիկ հաշիվ, առանց Ե խմբի</b>	<b>-8649.1</b>	<b>-11024.3</b>	<b>-2375.2</b>
Ապրանքներ, կրեդիտ	7049.4	4461.1	-2588.3
Արտահանում f.o.b.	7049.4	4461.1	-2588.3
Այլը	0.0	0.0	0.0
Ապրանքներ, դեբետ	-20690.9	-23165.8	-2474.9
Ներմուծում f.o.b.	-20690.9	-23165.8	-2474.9
Այլը	0.0	0.0	0.0
<b>Հաշվեկշիռ ապրանքների գծով</b>	<b>-13641.5</b>	<b>-18704.7</b>	<b>-5063.2</b>
Ծառայություններ, կրեդիտ	407.7	543.4	135.7
Տրանսպորտային	7.9	35.5	27.6
Այլը	399.8	507.9	108.1
Ծառայություններ, դեբետ	-1980.1	-2345.2	-365.1
Տրանսպորտային	-863.3	-960.9	-97.6
Այլը	-1116.8	-1384.3	-267.5
<b>Հաշվեկշիռ ծառայությունների գծով</b>	<b>-1572.4</b>	<b>-1801.8</b>	<b>-229.4</b>
<b>Հաշվեկշիռ ապրանքների և ծառայությունների գծով</b>	<b>-15213.9</b>	<b>-20506.5</b>	<b>-5292.6</b>
Եկամուտներ, կրեդիտ	158.7	172.9	14.2
Եկամուտներ, դեբետ	-582.6	-615.8	-33.2
<b>Հաշվեկշիռ եկամուտների գծով</b>	<b>-423.9</b>	<b>-442.9</b>	<b>-19.0</b>
<b>Հաշվեկշիռ ապրանքների, ծառայությունների և եկամուտների գծով</b>	<b>-15637.8</b>	<b>-20949.4</b>	<b>-5311.6</b>
Ընթացիկ տրանսֆերտներ, կրեդիտ	7013.3	9949.3	2936.0
Ընթացիկ տրանսֆերտներ, դեբետ	-24.6	-24.2	0.4

\* Կապիտալի արտահոսքը վճարային հաշվեկշռում չի արտացոլված՝ այդ տվյալների հավաքագրման համակարգում մի շարք խնդիրների առկայության պատճառով:

	2011թ. հունվար-մարտ	2012թ. հունվար-մարտ	Բացարձակ փոփոխությունը
<b>Հաշվեկշիռ ընթացիկ տրանսֆերտների գծով</b>	<b>6988.7</b>	<b>9925.1</b>	<b>2936.4</b>
<b>Բ. Կապիտալի հաշիվ, առանց Ե խմբի</b>	<b>1331.1</b>	<b>1059.8</b>	<b>-271.3</b>
Կապիտալի հաշիվ, կրեդիտ	1331.1	1059.8	-271.3
Կապիտալի հաշիվ, դեբետ	0.0	0.0	0.0
			0.0
<b>Ընդամենը Ա խումբ գումարած Բ</b>	<b>-7318.0</b>	<b>-9964.5</b>	<b>-2646.5</b>
<b>Գ. Ֆինանսական հաշիվ, առանց Ե խմբի</b>	<b>7232.4</b>	<b>9897.6</b>	<b>2665.2</b>
Ուղղակի ներդրումներ այլ երկրներ	0.0	0.0	0.0
Ուղղակի ներդրումներ այլ երկրներից	575.5	1107.8	532.3
Պորտֆելային ներդրումներից ակտիվներ	0.0	0.0	0.0
Արժեթղթերում մասնակցում	0.0	0.0	0.0
Պարտային արժեթուղթ	0.0	0.0	0.0
Պորտֆելային ներդրումներից պարտավորություններ	799.6	118.3	-681.3
Արժեթղթերում մասնակցում	0.0	0.0	0.0
Պարտային արժեթուղթ	799.6	118.3	-681.3
Ակտիվներ այլ ներդրումներից	-21926.8	-22641.8	-715.0
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.0	0.0	0.0
Պետական կառավարման մարմիններ	-14635.4	-15152.3	-516.9
Բանկեր	-3345.2	-525.5	2819.7
Այլ հատվածներ	-3946.2	-6964.0	-3017.8
Պարտավորություններ այլ ներդրումներից	27784.1	31313.3	3529.2
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.0	0.0	0.0
Պետական կառավարման մարմիններ	11679.5	12619.3	939.8
Բանկեր	2687.5	570.2	-2117.3
Այլ հատվածներ	13417.1	18123.8	4706.7
<b>Ընդամենը, խումբ Ա-ից Գ</b>	<b>-85.6</b>	<b>-66.9</b>	<b>18.7</b>
Դ. Սխալներ և բացթողումներ մաքուր	<b>85.6</b>	<b>66.9</b>	<b>-18.7</b>
<b>Ընդամենը, խումբ Ա-ից Դ (ընդհանուր հաշվեկշիռ)</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
<b>Ե. Ֆինանսական հոդվածներ</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
Ռեզերվային ակտիվներ	0.0	0.0	0.0
Հիմնադրամի վարկի և Հիմնադրամից փոխառությունների օգտագործում	0.0	0.0	0.0
Բացառիկ ֆինանսավորում	0.0	0.0	0.0
Արտասահմանյան ռեզերվներ (իրավունքներ) հանդիսացող պարտավորություններ	0.0	0.0	0.0